✓

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան **18.03.2022թ.**

2022 թվականի մարտի 18-ին կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստը:

Մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Սարգսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան	- «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ավագյան	- Տեսչական մարմնի ղեկավար
Գ. Հովհաննիսյան	- Տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ
Ս. Սարգսյան	- Տեսչական մարմնի դեղերի շրջանառության վերահսկողության վարչության փորձագետ

Օրակարգ.

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածության ներկայացում և հավանության արժանացում:

2. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու հարցի քննարկում և հավանության արժանացում:

3. Այլ հարցեր:

Ն. Մկրտչյանը առաջարկեց հաստատել օրակարգը, որում ընդգրկված էր 3 հարց:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ հաստատեցին օրակարգը:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու հարցի քննարկում և հավանության արժանացում

Հ. Ավագյանը ներկայացրեց Տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություն կատարելու մասին անհրաժեշտությունը: Մասնավորապես նշեց, որ Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական գործողությունների ժամանակ, անհրաժեշտություն է առաջանում ձեռք բերել լաբորատորիական ծառայություններ՝ դեղերի լաբորատոր փորձաքննություն: Մինչ այժմ Տեսչական մարմինը վերը նշված փորձաքննությունները պատվիրակել է ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերությանը: Վերջինս փոխօգնության կարգով, անվճար տրամադրում է իրենց բազաներում առկա տեղեկատվությունը: Արձանագրված վարչական իրավախախտումների ժամանակ դեղերի փորձաքննության վերաբերյալ խիստ անհրաժեշտ է նաև փորձագիտական եզրակացություն, սակայն փորձագիտական կենտրոնը գրությամբ տրամադրում է միայն տեղեկատվություն, որը բավարար չէ դա համարելու որպես խախտման փաստը հաստատող ապացույց: Նշված փաստի արդյունքում Տեսչական մարմնի կողմից վարչական վարույթների գործընթացը լիարժեք չի կարող իրականացվել: Առկա են դատական պարտված գործեր, որոնց հիմքում դրված է հենց այդ պատճառաբանությունը, առ այն, որ տվյալ վարույթների ընթացքում ներգրավված չի լինում կոնկրետ գործով փորձագետ և չի տրամադրվում փորձագիտական եզրակացություն:

Հետևաբար, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել դեղերի լաբորատորիական փորձաքննության ծառայություն:

Միաժամանակ նշեց, որ առկա են քաղաքացիների և տնտեսավարողների կողմից Տեսչական մարմնին ներկայացված դիմում-բողոքների թվի էական աճ՝ թրթռման թույլատրելի մակարդակի գերազանցման վերաբերյալ: Միաժամանակ թրթռման պայմանագրի մնացորդի անբավարարության պատճառով վերոնշյալ գործընթացին ընթացք տալ հնարավոր չէ, իսկ ջրի և աղմուկի փորձաքննության համար նախատեսված գումարներից արդեն կեսից ավելին սպառվել է: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կրկին անգամ կատարել գնումներ: 2021 թվականի հուլիսից Տեսչական մարմնին վերապահված աշխատանքի իրավունքի նկատմամբ

վերահսկողությունը վերականգնվել է, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել նաև ձեռք բերել «օդում փոշու պարունակությունը» լաբորատորիական փորձաքննության ծառայությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը առաջարկեց հաստատել միջոցառման և գնման պլանում համապատասխան փոփոխությունները:

Հ. Պողոսյանը առաջարկեց նախատեսել Տեսչական մարմնի բյուջեում պահուստային ֆոնդ, որպեսզի այդ ֆոնդից համապատասխան փոխանցումներ կատարվեն անհրաժեշտ այլ գնումներ կազմակերպելու համար: Միաժամանակ առաջարկեց հաջորդ նիստի օրակարգում հարցը բարձրացնել և քննարկել:

Լ. Նանուշյանը առաջարկեց, եթե վերջին տարվա ընթացքում այլ միջոցառումներ կազմակերպելու անհրաժեշտություն առկա է, ապա կատարել համապատասխան փոփոխություններ նույնպես:

Հ. Ավագյանը նշեց, որ այս պահին փորձաքննությունների ապահովման հարցը հրատապ է և անհրաժեշտ:

Ա. Ասոյանը առաջարկեց, որ հաշվի առնելով բյուջետային գործընթացի մեկնարկը, որը ավարտական փուլում է, վերանայել նախահաշվին վերաբերող փորձաքննությունների ծառայությունների տողերը Միջնաժամկետ ծախսերի ծրագրի և բյուջետային հայտի շրջանակներում և դրանց վերաբերող հիմնավորումները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ այդ մասով ավելի մեծ հատկացումներ ունենալու նպատակով:

Հ. Ավագյանը նշեց, որ այդ հայտը արդեն ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Վ. Հովհաննիսյանը նշեց, որ պահուստային ֆոնդ ստեղծել հնարավոր չէ: Նաև նշեց, քանի որ առաջարկվող փոփոխությունը ուղղված է արտաքին շահառուներին ծառայություններ տրամադրելուն, առաջարկեց, որ առաջիկա բյուջետային հայտում այդ գործընթացը նշվի որպես առանձին միջոցառում՝ իր համապատասխան ցուցանիշներով:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (10 կողմ) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելու հարցը արժանացավ հավանության:

2. Քննարկվեց օրակարգի հարցը՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածության ներկայացում և հավանության արժանացում:

Հ. Ավագյանը նշեց, որ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածուն՝ Սլավիկ Սարգսյանը, նախատեսվում է, որպեսզի իր աշխատանքով ապահովի Տեսչական մարմնին վերապահված դեղերի շրջանառության ոլորտի գործունեության համակարգումը: Նշեց, որ այժմ վերջինս աշխատում է Տեսչական մարմնում որպես դեղերի շրջանառության վերահսկողության վարչության փորձագետ և ներգրավված է այդ ոլորտում ընթացող աշխատանքներին:

Հ. Պողոսյանը նշեց, որ գործնականում Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալներին Խորհուրդը հավանություն է տալիս նշանակվելու համար, սակայն ազատման դեպքում Խորհրդի անդամները տեղեկանում են այդ մասին միայն համապատասխան որոշումներից հետո կամ բանավոր կերպով հետագայում: Նշվածից ելնելով առաջարկեց յուրաքանչյուր դեպքում Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի ազատման պատճառների մասին ազատմանը հաջորդող Խորհրդի նիստին տեղեկացնել Խորհրդի անդամներին:

Ա. Ասոյանը նշեց, որ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալների նշանակման գործընթացը կարգավորվում է «Տեսչական մարմինների մասին» և «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներով: Ազատման գործընթացը օրենքով ամրագրված չէ և Խորհրդի հավանության արժանացման գործառույթ սահմանված չէ: Նշվածից ելնելով առաջարկեց ձևակերպել Խորհրդի հանձնարարական Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի ազատման պատճառների մասին Խորհրդին տեղեկացնելու համար:

Լ. Նանուշյանը հարցրեց, թե քանի տեղակալի հաստիք է առկա Տեսչական մարմնում և ինչ ոլորտներ են համակարգելու:

Հ. Ավագյանը պատասխանեց, որ առկա է երեք հաստիք, որից մեկը այժմ զբաղեցրած է, ով համակարգում է իրավական ապահովման և աշխատանքային իրավունքի վերահսկողության մասերը: Մյուս հաստիքները նախատեսված են որպեսզի համակարգեն դեղերի շրջանառության ոլորտը, ինչպես նաև սանիտարահամաճարակային ու բժշկական օգնության և սպասարկման ոլորտները:

Ն. Մկրտչյանը առաջարկեց հրավիրել Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածուին:

Լ. Նանուշյանը խնդրեց թեկնածուին հակիրճ ներկայացնել ինքն իրեն և նշել վերջինիս ուժեղ և թույլ կողմերը:

Ս. Սարգսյանը ներկայացրեց իր աշխատանքային գործունեությունը մինչ Տեսչական մարմնում աշխատելը և նշեց, որ ուժեղ կողմերից է աշխատանքի հանդեպ տրամադրվածությունը և որ յուրաքանչյուր կատարվող աշխատանք պետք է հսկվի՝ դրական արդյունքի հասնելու համար: Թույլ կողմերից նշեց նույնը հաշվի առնելով, որ նշվածները կառավարման տեսանկյունից կարող են բերել ժամանակի կորստին:

Լ. Նանուշյանը խնդրեց նշել Տեսչական մարմնի թույլ կողմերը:

Ս. Սարգսյանը նշեց, որ թույլ կողմերից չի կարող նշել, քանի որ նոր է այդ մարմնում, սակայն գործընթացներում առկա են որոշակի խոչընդոտներ: Տնտեսավարող սուբյեկտներ այցելելուց տեսուչներին փոխանցում են, որ տնօրենը տեղում չէ և առաջարկվում է վերջիններիս այցելել այլ օր, որը խանգարում է աշխատանքին: Ստուգումների ժամանակ հանձնարարագիրը մինչև տնօրենը չի ստորագրում տեսուչը չի կարողանում սկսել ստուգման գործընթացը: Դա նպաստում է տնտեսավարողի կողմից որոշ թերություններ թաքցնելուն:

Լ. Նանուշյանը հարցրեց, թե ինչպես է տեսնում բարձրացված հարցի լուծումը և ոլորտում ինչ խնդիրներ է տեսնում:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ պետք է այդ դեպքում սկսել ստուգման գործընթացը մինչև տնօրենի ներկայանալը, իսկ խնդիրներից նշեց, որ բացակայում է հսկիչ գնումների գործընթացը, որը անհրաժեշտ է ստուգումները ավելի արդյունավետ իրականացնելու համար:

Ժ. Մայիլյանը հարցրեց, թե որն է թեկնածուի մոտիվացիան այդ պաշտոնը զբաղեցնելու համար:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ յուրաքանչյուր աշխատավայրում ձգտում է ստանալ ինքնուսուցում:

Վ. Հովհաննիսյանը հարցրեց, թե Տեսչական մարմինը ինչ դրական արդյունք է ստանալու թեկնածուի նշանակման արդյունքում:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ պետք է անել այն ամենը ինչը դրական արդյունք կտա Տեսչական մարմնի կողմից իրականացվող գործառույթներում և, որ յուրաքանչյուր դեպքում իր բացակայությունը պետք է զգալի լինի:

Հ. Պողոսյանը հարցրեց, թե դեղերի շրջանառության ոլորտում ինչ օրենսդրական խնդիրներ կան, որոնք թեկնածուն կցանկանա փոփոխել:

Ս. Սարգսյանը պատասխանեց, օրինակ դեղատնից վերցված ժամկետանց դեղերի իրացման և պահպանման հետ կապված պահանջների կատարման հարցն է: Տնտեսավարողները նշում են, որ վերջիններս չեն իրացնում, սակայն օրենքով պահպանմանը վերաբերող արգելքներ նախատեսված չեն:

Ա. Ասոյանը հարցրեց, թե թեկնածուն ինչ խնդիրներ է տեսնում դեղերի շրջանառության ոլորտում և շեշտեց պահպանման և իրացման հետ կապված հարցերը:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ դրա հետ մեկտեղ պետք է ուժեղացված լինի աշխատանքները չգրանցված դեղերի մասով, կեղծ դեղերի հետ կապված հարցերը ոչ հաճախ են հանդիպում, սակայն պետք է ապահովվի դեղերով: Պետք է համագործակցել համապատասխան մարմինների հետ, որպեսզի կատարվեն համապատասխան փոփոխություններ չգրանցված դեղերի ներմուծումը կանխելու ուղղությամբ:

Հ. Պողոսյանը հարցրեց, թե ո՞ր դեպքում թեկնածուն, նշանակվելուց հետո, սեփական նախաձեռնությամբ կազատվի աշխատանքից: Ի՞նչ աշխատանքային պայմաններում կտեսնի թեկնածուն, որ չի կարողանում ընդգրկվել աշխատանքներին ամբողջությամբ:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ այն դեպքում, երբ չի կարողանա ինքնուսուցումը կատարելագործել և ոլորտում չի կարողանա որևէ փոփոխություն կատարել, իսկ աշխատանքը չկարողանալու հետ կապված նշեց, որ դա կախված է անհատից և յուրաքանչյուր դեպքում դա նպատակ դնելու հարց է:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (10 կողմ) Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածության հարցը արժանացավ հավանության:

Որոշվեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի Սլավիկ Սարգսյանի թեկնածությանը:

3. Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ նիստերին քննարկել Տեսչական մարմնի բյուջեում պահուստային ֆոնդ ստեղծելու հնարավորության հարցը:

4. Տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝

1) Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի նշանակման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել Սլավիկ Սարգսյանի թեկնածությունը:

2) Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի հնարավոր ազատումների դեպքում, Խորհրդի պահանջով, ներկայացնել տեղեկատվություն ազատման պատճառների մասին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ